№ 8 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 19 ԴԵՏՐՎԱՐԻ 1894 № 8

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան: Առանձին համարները՝ 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի, կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում դրւում են միմիայն խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran. Rédaction CHAVIGH:

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր-Զուղայի հայոց հասարակական ոգին.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կիրակի օրուայ զօրահանդէսը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ:

ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ՀԱՅՈՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈԳԻՆ

—

Ամենին յայտնի է, որ պարսկահայերի առաջին մեծ կեդրոնը հին ժամանակներից սկսած եղել է և դեռ ևս է Նոր-Զուղան: Լինելով աթոռանիստ Պարսկաստանի և Հնդկաստանի հայոց թեմական առաջնորդի, ուղղակի կապուած է բարոյական և կրօնական շահերով, թեմի բոլոր քաղաքների հետ: Լինելով ամենամերձաւոր մեծ քաղաքը Ղար-Մհալի և Փէրիոյ հայ գիւղացի ազգաբնակութեան, որ պարսկաստանի մէջ ամենաստուար մասն է կազմում հայ հասարակութեան, նա անընդմիջական ազդեցութիւն ունի այդ գիւղացիների բարոյական վիճակի վերայ: Այդ նկատմամբով՝ Զուղայու հայոց մըտաւորական զարգացումը կամ այլապէս ասելով, հասարակական կեանքը՝ աւելի քան որևէ ուրիշ քաղաքինը, պէտք է հետաքրքրական լինի մեզ համար: Այժմ տեսնենք թէ մինչև ինչ աստիճան գիտակցութեամբ են կատարում, Զուղայի հայերը իրանց պատասխանատու դերը:

Նախ՝ մի ակնարկ ձգելով Նոր-Զուղայի ազգային հաստատութեանց տարեկան հաշիւների վերայ որ տպուած է 1892ին, մենք գալիս ենք այն տխուր եզրակացութեան, որ հասարակական կեանքի հետքն անգամ չըկայ Նոր-Զուղայի հայերի մէջ: Կան մի տասնեակ հաստատութիւններ, եկեղեցի, տպարան, վարժարան, և այլն, որոնք բոլորը կառավարւում են թեմական Առաջնորդի կողմից նշանակուած ժողովներով, և որոնց բոլորի հասոյթը կազմուած է Հնդկաստանի հայոց նուէրներից, կամ կալուածների հասոյթներից. կալուածներ՝ որոնք կամ գնուած են Հնդկաստանի հայերի նուիրատուութեամբ, կամ ի հնոց կտակուած են եղել այդ հաստատութեանց օգտին: Թէ ինչքանը, Զուղայի հայերը ինչ աստիճան նպաստում են դոցա, այդ մի հանելուկ է, որովհետև հետքն անգամ չըկայ մի տեղական օժանդակութեան:

Այս առիթով 'ի դէպ է մէջ բերել „Արայի“ անցեալ հոկ. և նոյ. ամսուայ թուի մէջ մի թղթակցութիւն Բաթավիայից: Նամակագիրը խօսելով Նոր-Զուղայի Ս. Կատարինէ օրիորդական դպրոցի մասին, որին Բաթավիոյ ազգային կառավարութիւնը տարեկան նպաստ է ուղարկում, միշտ գանգատւում է այն եղելութիւնից, որ Զուղայի հայերը չեն ուզում իրանք ամենափոքր մասնակցութիւն անել այդ դպրոցի ծախքերին, և զարմանք. երբ 18-99-ին Բաթավիոյ ազգային վարչութիւնը, մի նամակով՝ յայտնում է նոյն օրիորդական դպրոցի վարչութեան, որ ցանկալի էր տեսնել, որ տեղական բարեկեցիկ ընտանիքները օգնէին իրանց դպրոցին: Երեւակայեցէք ինչ պատասխան է ստանում, թէ Զուղայի հայերը սովոր չեն դպրոցական տուրք վճարել իրանց երեխաների համար. թէ տարիներից ի վեր իրանց զաւակները ձրիապէս ուսումնարան ուղարկած լինելով այժմ նոցա համար դժուարէ տուրք վճարել, մասնաւոր կերպով հարուստների համար:

Թղթակիցը շարունակում է „մի հաստատուած իրողութիւն է թէ՝ Զուղայի հայերը միշտ աչք են դրել արտաքին օգնականութեան, բայց իրանք երբէքիրանց չեն օգնում, անշուշտ ես ուզումեմ ասել ունևոր դասը, որոնք ի հարկէ կարող են ամսական 1 ղրան վճարել ամեն մէկ երեխայի համար:“

Ի՞նչպէս բացատրել այս անհասկանալի երևոյթը: Մենք գիտենք, թէ Զուղայի մէջ կան հարուստ հայ վաճառականներ, և ընդհանրապէս հասարակութիւնը վայելում է նիւթական բարեկեցիկ վիճակ, մենք իմանում ենք, որ կան բազմաթիւ հայ երիտասարդներ—ոչ թէ հայ երիտասարդութիւն— որոնք ուսել են Հնդկաստանում անգղիական դպրոցների մէջ կամ որոնք քիչ շատ շփուել են եւրոպական կեանքի հետ, և մեզ զարմացնում է որ այդ պարոնները ոչինչ օրինակ չեն առել եւրոպական հասարակական կեանքից, և վերադառնալով իրանց հայրենիքը, չեն մուծել նոցա մէջ շարժում, հոգածութիւն հանրական շահերի մասին. միխօսքով չեն ստեղծել մի հայ երիտասարդութիւն:

Մենք ուրախութեամբ արձանագրեցինք մեր էջերում, որ Նոր-Զուղայի մէջ կազմուած է մի ընթերցասիրաց ընկերութիւն Ռաֆֆի անուամբ. մենք ողջունում ենք այդ երևոյթը որպէս առաջին քայլը դէպ ի հասարակական կեանքը:

Իսկ գալով այն հարուստներին կամ դիւրակեցիկ ընտանիքներին, որոնք չեն ուզում վճարել իրանց զաւակների դպրոցական ծախքը, մենք յոյս ունինք, որ այդ երիտասարդները կը ստանձնեն նորանց հասկացնել թէ ինչ աստիճան ստորութիւն է ձրիակերութիւնը, և թէ իրանք օգնելով իրանց հաստատութեանց, որչափ աւելի իրաւունք կըստանան արտաքին օժանդակութիւն ակնկալելու:

Մենք պէտք է շնորհաւորենք Բաթավիոյ ազգ. կառավարութիւնն իւր տուած ողջամիտ խորհուրդի մասին. նոքա դորանով ցոյց են տուել թէ գիտակցութիւն ունին ազգային շահերի, և թէ աչքները կապած չեն վճարում:

Ն. Զուղայեցիների համար Հնդկաս-

տանը եղել միշտ մի նոր Կալիֆորնիա որտեղից միայն ոսկի են ստացում: Այս անգամ Բաթավիոյ հալերը տուել են թէ ոսկի և թէ մի ոսկեղէն խորհուրդ, „Դուք քեզ օգնիր, Աստուած էլ քեզ կ'օգնէ“:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՐԱԿԻ ՕՐՈՒԱՑ ԶՕՐԱՀԱՆԴԷՍԸ

Ամսոյս 13|25-ին Մայրաքաղաքիս մաշտոցի մէջ գանուում տեղի ունեցաւ մի զօրահանդէս, որին Ն. Կայսերական Վեհափառութիւնը պատուեց իւր ներկայութեամբ: Զօրահանդէսը կազմուած էր վեց վաշտից որոնց մէջ կար և կոզակների հեծելազունդը. նախ և առաջ հետեւակները արեցին իրենց մանեւրները ու հրապարակից դուրս երթալու ժամանակ անցան Ն. Կայսերական Վեհափառութեան առաջից զինուորական բարև տալով: Երբ հրապարակը բացուեցաւ, հետեւակների դուրս երթալուց յետոյ, հեծելազունդը սկսեց մարզումներ անել, որից Ն. Կայսերական Վեհափառութիւնը գոհ մնաց: Մասնաւորապէս չորս ժամ կէս օրից անցած զօրահանդէսը վերջացաւ և Ն. Վեհափառութիւնը այցելեց կոզակ հեծելազնդի բնակարանները, յայտնելով իւր բարձրը գնահատումը հեծելազնդի ռուսմարզիչ Կապիտան Բելլիարտին, տասը րոպէ աղնտեղ մնալուց յետոյ Ն. Կայսերական Վեհափառութիւնը պալատը վերադարձաւ:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ռաշտ 3 Փետ. 1894

Հաստատէք սոյն մէկ կանի տոքս տեղ տալ ձեր պատուական շաբաթաթերթի էջերից մէկում:

Թէհրանում, իմ բացած հանդանակութեանն, Խաչատուր Աբովեանի օգտին՝ մի քանի պարոնների ստորագրած նպաստը դեռ ես անվճար էր մնացեր երբ՝ ես իմ ածնանթեն գործերի պաշտօնաւոր հոգացող Թէհրանից:

Ուստի խնդրում եմ, պատուական լրագրոյդ միջոցաւ այն յարգելի պարոններին, որոնք դեռ ես չեն հասցրել ինձ իրենց նպաստը, բարեհաճեն ուղարկել որպէսզի կարելի լինի ինձ, շուտափոյթ հանգանակած գումարը հանձնել ուր որ հարկն է:

Ալէքսանդր Յովսէփեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամսոյս 16-ին չորեքշաբթի կէս օրից յետոյ, Ն. Կայսերական Վեհափառութիւնը բարեհաճեցել այցելել արքունական Դար-ալ-ֆոնուն (պօլիտէխնիք) դպրոցը, որը յատուկ կերպով իւր բարձր հովանաւորութեան ներքոյ է և իւր մասնաւոր հոգածութեան առարկայ:

—

Ուրախութեամբ կարդումենք „Մշակի“ լրագրում, որ հանդանակութիւն է բացուած հանդ. Գրիգոր Արծրունու անմահ յիշատակին, մի մահարձան կանգնեցնելու և նորա գրուածները հրատարակելու համար: Խմբագրութիւնս սեպուհ պարտականութիւնը սեպելով, առանձին նամակով դիմել է արդէն „Մշակի“ խմբագրութեան, արտօնութիւն ստանալու, Թէհրանում և Պարսկաստանի քաղաքներում էլ այդ հանդանակութիւնը սկսելու, յոյս ունենք որ պարսկահայերը շատ լուրջ կերպով կ'վերաբերուին դէպի իրանց անխոնջ „Մշակի“ անմահ յիշատակը:

—

Լսում ենք, որ մի ծրագիր է կազմուում, ձիաքարշ մի երկաթուղի հաստատելու, մինչև Այլթանթապան Ն. Կ. Վ. թագաւորի ամենամօտիկ ամարանոցը.

—

Խմբագրութիւնս փոխադարձաբար ըստացաւ, Ռոմանիայի (Մոլտավի—Վալաքիա) Կալացա քաղաքից, ռումաներէն „Compasul“ առևտրական և արուեստական թերթը:

—

Շնորհակալութեամբ ստացանք 9 միւռնիոյ հայ ընթերցարան 1893 թուի (24-ոդ շրջանի) տեղեկագիրը, որի մէջ կայ անդամակիցների ամբողջ ցուցակը, ընթերցասրահի և մատենադարանի կանոնագիրները և որից քաղումենք հետեւեալները: Նա հաստատուած է 1869-ին, ուստի և Յունուարի 1895 փետր. 6|18-ին նորա 25 ամեայ յոբելեանը. մուտք է ունեցել անցեալ տարի 12,365 մէճ. 25 դրուշ. և ելք 8,511 մէճ. 50 դրուշ. պարարտի դրամ ունենալով. 3,853 մէճ. 75 դրուշ: Ինչպէս երևումէ տեղեկագրից, մի ճոխ ընթերցարան է որ իւր կարեաց չափով աշխատել է լուսաւորել հայ երիտասարդութեան միտքը: Նա ունի մօտ 160 անդամներ տարեկան 6,539 դր. 25 փարայ, մուտքով և բռանում 25 հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն, անգլիերէն, և յունարէն թերթեր, որոնցից 22ը նուիրուած են զանազան բարեսէր բաներից:

—

Մենք յուրախութեամբ ծանուցանում ենք որ Յովհաննէս-խան Մասեհեանցի աշխատութեամբ արդէն Յանրգմանուած Շէքսպիրի հետեւեալ Թարգմանութիւնները. „Համլէտ“ „Մակբէթ“ „Ինչպէս կուզէք“ „Փոթորիկ“ „Անտոնիոս“ եւ „Կլէոպատրա“ որ յիշեալ պարոնը մտադիր է առանձին գրքով հրատարակութեան տալ:

Պ. Հ. Բազիլը, թարգմանած լինելով անզգիերէնից անմահ Արծրունու Իվանիսա վէպը, ուզարկելէ Լոնդոն 'ի տպագրութիւն:

—

Կիւրակի փետր. 13-ին տեղի ունեցաւ խնայողական ընկերութեան ընդհանուր ժողովը. Տարեկան հաշիւները քննելուց յետոյ, ժողովը շնորհակալութիւն յայտնեց գործող մարմնին, որ մի տարուայ համար ընտրուած լինելով, իւր հրաժարականը տուաւ: Գաղտնի քուէարկութեամբ ընտրուեցան մի նոր անդամներ, քանի փոփոխութեամբ: Մի ուրախալի երեւոյթ է, որ այս տարուայ անդամակցների տուրքերի գումարը անցեալ տարուայ կրկնապատիկն է, եւ գրուած են ամբողջ մօտ 100 հուման: Այս ցոյց է տալիս որ ընկերութեան նպատակը օրէցօր աւելի արծարծուում է տեղւոյս հասարակութեան մէջ:

—

Ղազվինուց նորից ստացինք նամակներ, տեսչի եւ ուսուցչի խնդրի մասին. զարմանք, մի լուր հաղորդուեցաւ մի կողմից եւ հերքուեցաւ միւս կողմից, այդ բաւական էր: Նիւ մի բուռն հայեր այդ փոքրիկ մի ամենաչնչին բան, որ վերաբերում է դպրոցի վարչութեան այդքան վիճելու առիթ են շինում եւ հասարակութեան միտքը զբաղեցնում ինչ են անելու ուրեմն այն քաղաքներում, ուր հայերը բազմաթիւ են: Լաւ չէր լինել փոխանակ այդ վիճաբանութիւնների, լուրջ նիւթերի վերայ թղթակցելու մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԷՈՒՐԵՐ

—Ինչպէս „Մշակը“ հիշեցրել է, Յունվարի 16-ին Թիֆլիսի ժողովարանում տեղի է ունեցել Հրատարակչական ընկերութեան սովորական սրարհանդէսը: Երեկոյեան ժամը 11-ին արդէն Ժողովարանի դահլիճում հաւաքված էր Թիֆլիսի ինտելիգենտ հայ հասարակութիւնը: Դահլիճներից մինումնուագումը եւրոպական նուագախումբը, մի ուրիշում ա իսկան թատրը: Պոքր դահլիճում աչքի էին ընկնում մի քանի պարահանդէսային նորոգութիւններ,— մի կողմում շինած Լեյֆելեան գաշտարակ՝ զարդարած գրքշակներով, որի տակ խմիչքներ էին ծախում մեր շնորհալի երգչուհի Զրիորդ Պապայեան և ուրիշները, իսկ միւս անկիւնում դրած էր մի կիոսկ, որի մէջ մի կողմից քանի կօպեկանոց գրողը՝ միւս կողմից ստանում էր մի որ և է գիր: Այդ բոլորը կազմակերպել էր երեկոյթի կառավարչուհին, իշխանուհի Մ. Թումանեան, որը ոչինչ ջանք չէր խնայել երեկոյթը աջող դարձնելու համար: Պարերը տեւեցին մինչև առաւօտեան ժամը 4-ը: Ընդհանուր արդիւնքը եղել է մօտաւորապէս 1,200 բուբլի:

—„Հայրենիք“ լրագրից քաղում ենք հետեւեալը: Կաթողիկոսը օրհնութեան կոնդակ գրկած է Մոսկուայի ժամհարը-

եղբայրներուն որք տակէ առաջ 17,000 րուբլի ղրկած էին Ս. էջմիածին, անոր տոկոսովը Գէորգեան ճեմարանից շրջանաւարտ մը Եւրոպայի համալսարան մը ղրկելու համար։

—Կարեւոր կտակ մը։ Ռուսաց հայոց թերթէն կը տեղեկանանք հետեւեալը։ Դեկտեմբեր 18-ին Նախիջեւան վախճանեցաւ խորին ծերութեան մէջ բժիշկ Գէորգ Տիգրանեանց որ մեծ համբաւ կը վայելէր իր քաղաքացիներուն քով։ Հանգուցեալը ձգեց բաւական կարեւոր հարստութիւն մը զոր ժողված էր առանձին կարգ անցած խնայողութեամբ. իր կտակին մէջ հետեւեալ կերպով կբաժնէ իր հարստութեան մէկ քանի մասերը. 21,000 րուբլի Էջմիածնի Գէորգեան ճեմարանին ձրի աշակերտներուն նպաստելու նպատակով. 4,000 րուբլի Նախիջեւանի թեմական դպրոցին. 2000 րուբլի օրիորդաց Ս. Հռիփսիմէ վարժարանին, 1,000 րուբլի Լազարեան ճեմարանի գրադարանին. 5,000 րուբլի դասագիրք շինելու և հայոց դպրոցներում աղքատ աշակերտներուն ձրի բաշխելու. 2,000 րուբլի հայերէն լեզուի արմատներուն տպագրութեան համար. 2,000 րուբլի հայերէն հոմանիշներու բառարանի մը հրատարակութեան համար։ Այս 37,000 րուբլիէն (4,000 ոսկի) զատ, հանգուցեալը կարեւոր գումարներ կտակած է նաեւ այլ և այլ դպրոցներու, բարեգործական ընկերութեանց, ինչպէս Նախիջեւանի առաջին եկեղեցական ծխական վարժարանին։ Հանգուցեալը ծանօթ էր իբրեւ հեղինակ Նախիջեւանի բարբառով հայերէն առածներու և առակներու հաւաքածոյի մը։ Իր կարգին համաձայն մարմինը թաղուեցաւ Ս. Խաչի վանքը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Փարիզ, 8|20 փետ։ Դժոխային մի մեքենայ պայթեց այստեղ այսօր, վարձուած մի տան սենեակներից մէկի մէջ։ Բնակիչներից շատեր և տան տիրուհին վիրաւորուեցան. տանը վարձողներից մէկը որ հեղինակն է այս գործի դեռ չէ բռնուած։ Ոստիկանութեանը այժմ այս քանը յայտնի է, որ այդ մարդու անունը Ժիւբալի է, և որ նա սենեակներ է վարձում երկու տան մէջ, և երկու հոգի ոստիկանութեան տեսուչներից նամակով խնդրում է որ գան նորան տեսնելու, նամակները գրելուց յետոյ նա երկու ռումբ է դնում տան մէջ այնպէս որ դուռը բացուելուց երկուքն էլ պայթեն և ինքը անհետանումէ։ Երկրորդ ռումբը չը պայթեց, ոստիկանները փախենալով ձեռք դպցնել, ելեքտրականութեամբ պայթեցրին դորան անվտանգ հեռաւորութիւնից, պայթումը մեծ վնաս տուաւ։

Լոնդոն, 9|21 փետ։ Մեծն Բրիտանիա, Ֆրանսա, Իտալիա և Աւստրիա խորհուրդ են տալիս Մարոքին ընդունել Սպանիայի առաջարկութիւնները։ Ասուումէ թէ Ռուսիա ծանուցել է Ֆրանսային որ եթէ Ֆրանսական ընդեղէնների մաքսի աւելացումը խանգարէ Ռուսական ընդեղէնների արտածութիւնը, Ռուսաստանը չը պիտի շարունակէ Ֆրանսայի հետ ունեցած իւր վաճառականական դաշնագիրը պահել։

Փարիզ, 9|21 փետ։ Անարխիստներից շատեր ձերբակալուեցան այս տեղ երեկ երեկոյ, որոնց մէջ և մի մարդ Բաստարդ անունով, որը կարծւումէ իսկական հեղինակը լինել երեկուայ ռմբաձգութեան յանցանքի։ Պատգամաւորների սենեակը վաւերացրեց այն օրէնքը որով ամեն հէքտոլիտր ընդեղէնի վերայ եօթը ֆրանք հարկ պիտի տրուի։

Լոնդոն, 10|22 փետ։ Քաղաքագիտական շրջաններում ասւումէ թէ հաւանական է, որ լորդ Լանսդաունը Պետերբուրգի դեսպան ընտրուի։ Իւզատու սերմերի և ցորենի առուտուրը անդ այժմ անուանական է այն լուրի պատճառով թէ Հնդկաստանի կառավարութիւնը մտադիր է նոցա արտածութեան վերայ հարկ դնել։

Հռոմ, 9|21 փետ։ Իտալիայի Ֆինանսական հաշուէցուցակում հարիւր եօթանասուն եօթը միլիոն ֆրանքի մի բաց կայ. առաջարկուած խնայողութիւնները քառասուն և հինգ միլիոն ֆրանքի են հասնում, և մէկ միլիոն ֆրանքի էլ նոր հարկերը։

Լոնդոն, 10|22 փետ։ Լոնդոնի անարխիստները մի մեծ հանդէս են կազմակերպում Բուրդինի թաղման համար, որ սպանուեցաւ Գրինվիչի մօտ տեղի ունեցած պայթումով։ Թաղման հանդէսը տեղի պէտք է ունենայ, այսօր, Ֆինչլէյի հանգստարանում։ Մամուլը միաձայն դատապարտում է կառավարութեանը որ այսպիսի մի ցոյցի թոյլ է տալիս տեղի ունենալ։ Փարիզում ռումբից վիրաւորուած տանտիրուհին մեռաւ իւր վէրքերից։ Լորդ Քրոմէր մի տեսակցութիւն է ունեցել Խէդիւի հետ և նորանից լաւ ընդունելութիւն է գտած։

Բէրլին, 10|22 փետ։ Գերմանական արծաթի կոմիսիօնի բացման առթիւ կոմս Պօսադովսկին խօսելով Հնդկաստանի և Ամերիկայի դրամական դժուարութեան մասին ասեց, որ գերմանական կառավարութիւնը տեսնելով արծաթի անկման վատ հետեւանքները գերմանական վաճառականութեան և արդիւնաբերութեան վերայ, ընտրել էր այդ կոմիսիօնը խնդիրը քննելու և տեսնելու թէ ինչպէս կարելի է բարձրացնել արծաթի արժէքը և այնպէս պահել։

Լոնդոն, 12|24 փետ: Ոստիկանութիւնը այժմ հսկում է 200 անարխիստների վերայ: Անգլիայի բանկի պահեստի դրամը քսաներկու միլիոն վեց հարիւր հազար անգլիական ոսկու է հասնում, գումար՝ որ ամենախոշորն է պատմութեան մէջ իբրեւ պահ՚ստի դրամ: Լանսդաուն երեկ հասաւ Դովէր: Վերջին րոպէում անարխիստ Բուրդինի Թաղման հանդիսի ցոյցը արգելուեցաւ իշխանութեան կողմից: Մեծ Թւով ոստիկաններ դրուեցան ամբողջ ճանապարհի վերայ մինչեւ գերեզմանատունը, կարգ ու կանոն պահպանելու համար: Ամբոխը ցեխ եւ նշբինջի կեղեւ էր ձգում դագաղի վ'րայ գոչելով անկցին անարխիստները: Մէկ հոգի ձերբակալուեցաւ մինչ փորձում էր գերեզմանի վերայ պատնախօսութիւն անել:

Լոնդոն, 12|24 փետ: Գերմանական արծաթի կոմիսիօնի նիստերը գաղտնի են լինում եւ բոլոր խօսուածները գաղտնի են պահւում: Մարքիզ Սոզ-Թանի տեղի է տուած Սպանիական պաշտօնէներին եւ ժէնէրալ Մարտինէզ Կամպօս սպանիական դեսպանը վերադառնում է Մադրիդ:

Լոնդոն, 12|26 փետ: Նորից ձայն է տարածւած որ Գլադստոնը շուտով պէտք է տայ իր հրաժարականը, որովհետեւ նորա աչք'րի տկարութիւնը եւ հանգստանալու անհրաժեշտ հարկը Թոյլ չեն տալիս նորան շարունակել իր պաշտօնը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է որ այսպիսի դէպքում լորդ Ռօզբէրին առաջին նախարարապետ պէտք է լինի եւ սըր Հարկուրտ համայնքների ժողովի գլուխը: Լորդ Լանսդաունի հնդկական գործերը արգելք պէտք է լինին նորա դեսպան դառնալուն Պետերբուրգում: Ասւում է որ անարխիստ Բուրդինի միտքն այն է եղած, որ Գրինվիչի դիտարանը կործանէ, եւ որ ռումբը ժամանակից վաղ է պայթած:

Թէհրան 19|3 փետրվարի 1894

Դրամական արժէքներ (Բորսա)

				ղրան	շահի
Պարսկական	20 դ. էշրէֆին	արժէ		34	—
»	10 »	»	»	19	—
»	5 »	»	»	9	—
Ռուսական	Ոսկին (պոլին)		»	42	—
»	Մանէթը (ռուբ.)		»	5	10
Անգլիական	Լիրան		»	52	—
Ֆրանսիական	Ֆրանկը		»	2	—
Տաճկական	Մէճիդիէն		»	50	—

Արտօնատէր-Հրատարակիչ՝ Անդրէաս Բէկնազարեանց։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԻԼԱՆԻ ՀԻՒՐԱՆՈՑ ՌԱՇ-ՏՈՒՄ

Աւետիս Յովսէփեանի բնակարան և կերակուր, կահաւորուած սենեակներ. քաղաքի կեդրոնում, կառավարութեան ապարանքի հանդէպ:

ԳՆԵՐԸ ՉԱՓԱՒՈՐ

Հեռագրի հասցէ „Աւետիս Ռաշտ":

2—3

Hotel de Ghilan

à Recht-Perse

Situé au centre de la ville vis-à-vis du Palais du gouvernement chambres meublées, nourriture.

À DES PRIX MODÉRÉS

Adresse télegraphique „Avedis-Recht"

2—3

GHILAN HOTEL
Resht Persia

Board, lodging and furnished rooms, situated in the centre and oppisite government buildings. Prices moderate

Telegraphic address „Avetis-Resht"

2—3

ГОСТИННИЦА ГИЛАНЪ
ВЪ РЕШТѢ-(ПЕРСІЯ)

Аветиса Осипіанца

Меблированныя комнаты, обѣдъ и ужинъ. въ центрѣ города, противъ правительственнаго двора. ЦѢНЫ УМѢРЕННЫЯ.

Адресъ телеграфа „Аветисъ Рештъ."

2—3

Ամեն տեսակ եւրոպական ձարեր կը գտնուին բժիշկ ԲԱԶԻԼԻ դեղատանումը Լալէզար փողոցում Թեհրանում. տասն բուժանաչափ եւ աւելի զնողի համար, սովորականի արժէքից զիջում կը լինի: Գիշեր ժամանակում եւս դեղատունը բաց է:

ՆԵՐԿԱՅ 1894 ԹՈՒԱԿԱՆԻՆ

22-րդ ՏԱՐԻ „Մ Շ Ա Կ" 22-րդ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակւում է Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ: „ՄՇԱԿԸ" ստանում է սեփական հեռագիրներ:

„ՄՇԱԿԻ" տարեկան գինը 10 րուբլի է, կէս տարվանը՝ 6 րուբլի, ամսականը՝ 1 րուբլի: Գրվել „ՄՇԱԿԻՆ" կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնում):

„ՄՇԱԿԻՆ" գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով. Tiflis, Rédaction du journal arménien „MSCHAK".

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

„Անօնիմ ընկերութիւնը երկաթուղու եւ ձիաքարշ երկաթուղու գծերի Պարսկաստանում" հիմնել է մեծ արհեստանոց երկաթուղու կայարանի մօտ Թեհրանում:

Այդ արհեստանոցն ունի ռուս արհեստաւորներ եւ վերջերումս ստացել է ամենաընտիր եւ ամենանոր մեքենաներ ու ընդունում է պատուէրներ, ձուլելու, մեխանիքական, ատաղձագործական եւ բերել տալու զանազան մեքենաներ, նոցա սարքելը ու նորոգելը:

Արհեստանոցը 1. ձուլում է առարկաներ չուգունից 5 խալվար, իսկ պղնձից մէկ խալվար ծանրութեամբ, 2. տաշում է մետաղէ առարկաներ մեքենաների վերայ 2½ խանի արշին երկարութեամբ, 3. պատրաստում է ջրհորների համար ջրահան (ջուլումբաներ), աղալու, քամու տալու, հատիկներից իւղ հանելու մեքենաներ, 4. նաեւ պատրաստում է շոգիէ, քամու, ջրի ջրաղացներ ու շոգիէ եւ սապոն եփելու կաթսաներ: 5. բերել է տալիս է շոգիէ կաթսաներ եւ սարքում է իւր տեղը պահանջողին յանձնելու համար (կաթսայի ոյժը կարող է լինել 150 ձիու ոյժի չափ): 6. քաշում է տելեֆոնի գծեր եւ նորոգում վնասուած մեքենաները (այժմ 11 հիմնարկութիւններ քաղաքումս միացած են տելեֆոնով գլխաւոր տեղի հետ Բաղվաշում):

Ատաղձագործական առարկաներն են կահկարասիք, յատակներ, շրջանակներ, դռներ եւ այլն:

Ընդհանուր կառավարիչ ԲՈՍՏՄԱՆ

1—4